ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիրը՝ 92-31.1-Մ4-2) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիրը՝ 92-31.1-Մ4-2) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է հետևյալ մասնագիտությունը՝

1	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ	Գործարարություն և վարչարարություն	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3	Ենթաոլորտ		Տնտեսագիտություն

- **Աշխատանքային ստաժը և փորձը՝**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

Գործառույթները՝

- մասնակցում է հաշվապահական հաշվառումը վարելու աշխատանքներին և պատասխանատվություն է կրում աշխատակազմի ֆինանսական, հարկային, վիճակագրական պարտադիր վճարների մասին հաշվետվություններ ժամանակին կազմելու և ներկայացնելու համար,
- մասնակցում է Մարզպետի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցրած վճարումների հաշվարկի և վճարման, եկամտահարկի հաշվարկի, պետական բյուջե վճարման, ապահովագրական նպաստների հաշվարկման և վճարման, հաշվետվությունների /եռամսյակային, տարեկան/ կազմման և լիազոր մարմնին ներկայացման հետ կապված աշխատանքներին,
- իրականացնում է Մարզպետի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների սոցիալական փաթեթի շահառուների հաշվառման և ֆինանսավորման հետ կապված աշխատանքները,
- մասնակցում է անկանխիկ հաշվարկների փաստաթղթավորումը և/կամ անհրաժեշտության դեպքում Մարզպետի աշխատակազմի կանխիկ դրամի փաստաթղթավորման, դրամարկղային գրքի վարման գործառույթներին,
- մասնակցում է գործուղման մեկնող աշխատակցների գործուղված վայրում կատարվող ծախսերի փոխհատուցվող գումարների հաշվարկման և վճարման գործառույթների կատարման հետ կապված աշխատանքներին,
- մասնակցում է ամենօրյա բանկային գործառույթների իրականացման, Մարզպետի աշխատակազմի հիմնական և շրջանառու միջոցների հաշվառման, մաշվածության հաշվարկման աշխատանքների իրականացման, դեբիտորական և կրեդիտորական

պարտքերի եռամսյակային հաշվետվությունների, կենսաթոշակային ֆոնդի միջոցների մասին հաշվետվությունների կազմման հետ կապված աշխատանքներին,

- մասնակցում է հաջորդ տարվա բյուջեի հաշվին Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ կատարվող ծախսերի բյուջետային հայտերի ամփոփման և ներկայացման աշխատանքներին,
- մասնակցում է տվյալ տարվա պետական բյուջեից Մարզպետի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանացանկերի կազմման, քննարկման և ներկայացման գործընթացներին,

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2023թ. նոյեմբերի 9-ը ներառյալ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ պատճենների հետ միասին.

- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- անձնագիր կամ նույնականացման քարտ
- դիպլոմ
- աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվի քաղվածք
- արական սեռի անձինք՝ զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը.
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի

Աշխատավարձը կազմում է 189.696 դրամ (մեկ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր իննսունվեց դրամ):

Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ կամ փաստաթղթերն ուղարկել անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցեով՝ aragatsotn.andznakazm@ mta.gov.am

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից մինչև 13:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝
/ **0232/ 35383**